ԱՐՍԵՆ ՍՐՇԱԼՈՒՅՍԻ
ՂԱԶԱՐՅԱՆ

ԵՊԿ Օպերային պատրաստման ամբիոնի դոցենտ, օպերային ռեժիսոր
E-mail: ghazaryan737373@gmail.com
Doi: 10.58580/18290019-2023.1.64-44

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Մարգարիտա Աշոտի Ռուխկյանի՝ 2.5.2023 թ.,
ընդունվել է տպագրության՝ 20.5.2023 թ., ներկայացրել է հեղինակը՝
20.4.2023 թ.

ԵՊԿ ՕՊԵՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՄԲԻՈՆԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ամփոփում

ԵՊԿ գիտակրթական բուհի 100-ամյա տարեգրությունը, կարելի է անվանել լեգենդար։ Հիմնադրման ակունքից սկսած կայացման ճանապարհ է անցել, հենվելով հայկական երաժշտարվեստի անվանի ու լեգենդար գործիչների, աշխարհահռչակ արվեստագետների, նվիրյալ դասախոսների ու տաղանդաշատ սաների ստեղծագործական ուղիների վրա։ Գեղարվեստական արժեհամակարգի լավագույն ավանդույթներով և ժամանակակից ձեռնարկներով կոնսերվատորիան ակտիվ դերակատարում ունի Հայաստանի մշակութային և հասարակական կյանքում։ 2012 թվականից Եվրոպական կոնսերվատորիաների ասոցիացիայի (ԵԿԱ) լիիրավ անդամ է։ Ձեռնամուխ է լինում կրթական բարեփոխումների, քայլում համահունչ համաշխարհային գիտակրթական արժեքներին, նորարարական հայեցակարգերին։ ԵՊԿ-ի կրթական համակարգում հանդիսանում է Օպերային պատրաստման ամբիոնը, ուր մասնագիտական բազմատարր կրթակարգը ստեղծագործում է մեկ ամբողջական, համապարփակ մոդելով՝ օպերային ներկայացման ստեղծման համար առաջնային գրական և երաժշտական դրամաների վերլուծական, դիրիժորական, դաշնամուրային, վոկալ-կատարողական, դերասանական և ռեժիսորական արվեստների, բեմագրական և բեմադրական ստեղծագործական համաձուլվածքով։ Օպերային պատրաստման 1927-ից ամբիոնում դասավանդվող մասնագիտական հատուկ ենթաառարկաները՝ դերասանի վարպետություն, պար–բեմական շարժում, օպերային դրամայի և դերերգի վերլուծություն, դերերգի ուսուցում, օպերային պատրաստման գործնական մասնագիտացում, որոնցից յուրաքանչյուրի դասավանդման տեսական և մեթոդական մոդելների առանձնահատկություններով։

Բանալի-բառեր. *Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, ԵՊԿ, Եվրոպական կոնսերվատորիաների ասոցիացիայի, Օպերային պատրաստման ամբիոն, օպերային արվեստ, կրթամշակութային հարցեր, ստեղծագործական պատմության, պատմամշակութային տեսության տիրույթ, օպերային դասարան, ենթաառարկաներ, բարեփոխումների առաքելություն, պրոֆեսորադասախոսական կազմ, հետազոտական աշխատանք, դերասանի վարպետություն, պար-բեմական շարժում, օպերային դրամայի և դերերգի վերլուծություն, դերերգի ուսուցում, օպերային պատրաստման գործնական մասնագիտացում։*

Abstract

Opera director, Docent at Yerevan State Conservatory after Komitas ***Arsen Arshaluys Ghazaryan. - "The educational and cultural history of the Opera Training Department of the YSC. Studying and Assessing Conditions".***

Considering Yerevan Komitas State Conservatory as a unique musical higher educational institution in Armenia, its most important mission being the preservation of Armenian and world musical cultural values, historiographic study, teaching and improvement of creative and performing arts, the author singles out a separate area of research and considers specific cultural and educational issues related to the Department of Opera Training of YSC. The author considers the fact that the Department of Opera Training, as a unique educational-creative, musical-theatrical multi-element system with methodical, theoretical, and practical components of specialized professional subjects, has never been the object or subject of scientific research in its 95-year history. The chronicle and history of the Opera Training Department remain unstudied and unsystematized, posing a serious problem for modern cultural and educational progress. Investigating the

problem within the field of historical-cultural theory, the author considers it relevant and urgent to systematically present the practical and creative history of the Department of Opera Training (from its foundation to the present day). This involves elevating cultural-educational, practical, theoretical, and methodological issues, as well as current challenges faced by the Department of Opera Training, to the level of scientific inquiry for further research. Given the extensive nature of the research, the author plans to disseminate the findings across several articles, with this article being the first in the series.

Key Words: *Yerevan State Conservatory after Komitas, YSC, European Association of Conservatoires, Opera Training Department, opera art, educational and cultural issues, scope of creative history, historical and cultural theory, opera class, sub-subjects, mission of reforms, professorial staff, research work, actor's mastery, dance-stage movement, analysis of opera drama and role singing, teaching of role singing, practical specialization in opera training.*

Абстракт

Оперный режиссер, доцент Ереванской государственной консерватории имени Комитаса ***Арсен Аршалуйсович Казарян. - "Культурно-обрзовательная хроника кафедры Оперной подготовки ЕГК. Изучение и оценка условий".*** *Рассматривая Ереванскую государственную консерваторию имени Комитаса как уникальное музыкальное высшее учебное заведение Армении, его важнейшую миссию в сохранении армянских и мировых музыкальных культурных ценностей, историографическом изучении, преподавании и совершенствовании творческих и исполнительских искусств, автор выделяет в отдельную область исследования и рассматривает конкретные культурно-образовательные вопросы кафедры оперной подготовки ЕГК. Автор считает тревожным тот факт, что кафедра оперной подготовки как уникальная образовательно-творческая, музыкально-театральная многоэлементная система с методической, теоретической и практической составляющими преподаваемых специальных профессиональных предметов, за последние 95лет своей истории никогда не была объектом или предметом научного исследования. Хроника и история деятельности кафедры оперной подготовки не изучены и не систематизированы, что является серьезной проблемой для современного культурно-образовательного прогресса. Исследуя проблему в области историко-культурной теории, автор считает актуальным и неотложным систематическое изложение практической и творческой истории кафедры оперной подготовки (со дня основания до наших дней), выведение в плоскость научного исследования культурно-образовательных, практических, теоретических и методологических вопросов и актуальных проблем кафедры оперной подготовки для дальнейшего научно-исследовательского изучения. Исследование обширное, поэтому автор намерен изложить его в нескольких статьях. Эта статья является первой.*

Ключевые слова: *Ереванская государственная консерватория имени Комитаса, кафедра оперной подготовки, хроника и история деятельности, культурно-образовательный прогресс, культурно-образовательные, практические, теоретические и методологические вопросы.*

Նախաբան.

Հայացք ներսից

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ազգային դերակատարությամբ երաժշտական մշակույթի, հայ և համաշխարհային ակադեմիական և ժամանակակից, հայ ազգային, հոգևոր երաժշտարվեստի պատմագիտական ուսումնասիրման, պահպանման, ստեղծագործական և կատարողական մշակույթի կատարելագործման և դասավանդման կարևորագույն առաքելություն իրականացնող եզակի բարձրագույն կրթական հաստատությունն է՝ Մայր երաժշտանոցը: Կրթօջախն իր նվիրական առաքելությունն անբասիր իրականացնում է արդեն մեկ դար շարունակ: Այս գիտակրթական օջախի հարյուրամյա տարեգրությունը, հիրավի, կարելի է անվանել լեգենդար: Հիմնադրման ակունքից սկսած՝ անցնելով ձևավորման և կայացման հետաքրքիր ճանապարհ, հենվելով հայկական երաժշտարվեստի անվանի ու լեգենդար գործիչների, աշխարհահռչակ արվեստագետների, նվիրյալ դասախոսների ու տաղանդաշատ սաների ստեղծագործական ուղիների վրա, այսօր էլ պատվով պահում է իր վաստակած հեղինակությունը թե՛ Հայաստանում, թե՛ աշխարհում, դիմակայում հարափոփոխ ժամանակների առաջացրած տարաբնույթ մարտահրավերներին: Խորապես զգալով և կրելով ընթացիկ դարաշրջանի մշակութային ու ստեղծագործական շունչն ու ոգին՝ իր գեղագիտական ու գեղարվեստական արժեհամակարգի լավագույն ավանդույթներով և ժամանակակից ձեռնարկներով կոնսերվատորիան ակտիվ դերակատարում ունի Հայաստանի մշակութային և հասարակական կյանքում: 2012 թվականից Եվրոպական կոնսերվատորիաների ասոցիացիայի (ԵԿԱ) լիիրավ անդամ է: Ձեռնամուխ է լինում կրթական բարեփոխումների, քայլում համահունչ համաշխարհային գիտակրթական արժեքներին, նորարարական հայեցակարգերին: Այս որակումների աներկբա վկայախոսները հայկական և համաշխարհային բազմաշերտ երաժշտարվեստում (կոմպոզիտորական, դիրիժորական, անհատ երաժիշտ և վոկալ կատարողական, խմբերգային, նվագախմբային, օպերային և այլն…) իրենց բացառիկ կատարողական

արվեստով փայլող, համբավ, ճանաչում ու հեղինակություն ունեցող հայ երաժիշտ արվեստագետներն են, 100-ամյա ԵՊԿ-ի դարբնոցում թրծված տարբեր տարիների սերունդներ, այսօր արդեն անվանի մասնագետ-մանկավարժները՝ միջազգային տարբեր հեղինակավոր փառատոների մրցանակակիր և դափնեկիր իրենց սաներով:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կրթամշակութային համակարգն իր կառուցվածքով բավական յուրօրինակ է: Կրթական ներկայիս համակարգը ձևավորվել է 100-ամյա գործունեության ընթացքում՝ ունենալով պրոգրեսիվ կրթական տարբեր բարեփոխումներ: Այս մասին վավերագիր տվյալներ և տեղեկություններ է մեզ տալիս 1973 թվականին կոնսերվատորիայի հիմնադրման 50 ամյակի առթիվ գրված Մ. Բերկոյի «Կոմիտասի անվան կոնսերվատորիան» աշխատությունը (1.): Երևանի կոնսերվատորիայի հինգ տասնամյակը ներկայացնող այս պատմական ժամանակագրության մեջ վկայագրվում է, թե ինչպես, հիմնադրման պահին լինելով մասնագիտական դասարաններ, հետագայում ընդլայնվելով, առանձնանալով, ձևափոխվել, դասարանները դարձան ամբիոններ (անվանարկումն ըստ պատմական սկզբնատիպի. կվարտետի և կամերային անսամբլի, վոկալ, երգչախմբային դիրիժորության, տեսության և պատմության, դաշնամուրային, փողային նվագարանների, օպերային և այլն): Երևանի պետական կոնսերվատորիայի հիմնադրումը և պրոգրեսիվ գործունեությունը անցյալ դարի առաջին կեսին աննախադեպ թափ հաղորդեց Հայաստանում երաժշտարվեստի բազմակողմանի զարգացմանը, պրոֆեսիոնալ ուսումնառությանը, ԵՊԿ Մայր բուհի կամարի ներքո դուստր կրթօջախների, երաժշտական ուսումնարանների և դպրոցների ստեղծմանը հանրապետության ամբողջ տարածքում, ուր իրենց նվիրյալ աշխատանքով աչքի ընկան և այսօր էլ շարունակում են դասավանդել բազմաթիվ երևելի մանկավարժներ:

Հատկանշական է այն հանգամանքը, որ հայ երաժշտական կրթամշակութային այս դարբնոցի ամեն առանձին վերցրած մասնագիտական միավոր, դասարան և արվեստանոց, կրթական և ստեղծագործական առումով, ունենալով տեսական, մեթոդական, գործնական-կատարողական իր առանձնահատուկությունները, ստեղծագործական առումով, գեղարվեստական և գեղագիտական հատկանիշներով անբաժանելիորեն շաղկապված ու պայմանավորված է մյուս մասնագիտությունների հետ: Այս բնորոշման լավագույն փաստացի մոդելն է երաժշտաթատերական սինթետիկ, բազմաշերտ օպերային արվեստը, որի բարձրագույն մասնագիտական պատրաստման բաղադրիչը ԵՊԿ–ի կրթական համակարգում հանդիսանում է Օպերային պատրաստման ամբիոնը, ուր մասնագիտական բազմատարր կրթակարգը ստեղծագործում է մեկ ամբողջական, համապարփակ մոդելով՝ օպերային ներկայացման ստեղծման համար առաջնային գրական և երաժշտական դրամաների վերլուծական, դիրիժորական, դաշնամուրային, վոկալ-կատարողական, դերասանական և ռեժիսորական արվեստների, բեմագրական և բեմադրական ստեղծագործական համաձուլվածքով: Կրթական այս բազմաշերտ ձևաչափով էլ (ներկայումս) մշակված և պայմանավորված են օպերային պատրաստման ամբիոնում դասավանդվող մասնագիտական հատուկ ենթաառարկաները՝ դերասանի վարպետություն, պար – բեմական շարժում, օպերային դրամայի և դերերգի վերլուծություն, դերերգի ուսուցում, օպերային պատրաստման գործնական մասնագիտացում, որոնցից յուրաքանչյուրի դասավանդման տեսական և մեթոդական մոդելների առանձնահատկություններին կանդրադառնանք հաջորդիվ:

Օպերային պատրաստման ամբիոն. հայտնին և անհայտը

Օպերային պատրաստման ամբիոնը ևս իր կրթաստեղծագործական տարեգրությունն սկսել է որպես Օպերային դասարան (1927 թ.): Մ. Բերկոն գրում է. «Կոնսերվատորիայի պատմության մեջ հաջորդ նշանակալի ձեռքբերումը, կարևոր իրադարձությունը, ևս մեկ անմոռանալի ամսաթիվը, 1927 թվականի մայիսի 18-ն էր:

Այդ օրը կոնսերվատորիայի սաների կողմից ներկայացվեցին օպերային հատվածներ: Դրանում մեծ վաստակ ունի Անուշավան Գրիգորի Տեր-Ղևոնդյանը, ով 1926-1927 ուսումնական տարվա սկզբին դարձավ կոնսերվատորիայի տնօրեն: <...> Ա. Գ. Տեր-Ղևոնդյանը կոնսերվատորիայի նախագահությունում, որպես անդամներ, հրավիրել է Ա. Ա. Սպենդիարյանին և Վ. Դ. Կորգանովին (Ղորղանյան):

Ա. Ա. Սպենդիարյանը ոգևորությամբ ողջունեց կոնսերվատորիայի ուսանողների կողմից օպերային հատվածների բեմադրությունը: Հայաստանում առաջին անգամ բեմում, զգեստներով և դիմահարդարմամբ, նվագախմբի մասնակցությամբ, ներկայացվեցին օպերային տեսարաններ, այդ թվում. «Դեը» օպերայի նախաբանը, «Եվգենի Օնեգին» օպերայից նամակի և «մենամարտի տեսարանը, «Միդա» օպերայից Միդայի և Ամներիսի տեսարանը և գուգերգը 2-րդ գործողությունից, և տեսարան 3-րդ գործողությունից: Օպերային և նվագախմբային դասարանների դեկավարն էր Ի. Հովհաննեսյանը (Օգանեզով), ռեժիսոր՝ Ա. Ս. Բուրջալյանը: Այս պատասխանատու փորձությանը մասնակցած ուսանող–երգիչներին նախապատրաստել էին դասախոսներ՝ Մ. Մ. Մելիքսեթյանը և Ա. Ս. Աբրամյանը:

Սա, անկասկած, Երևանի կոնսերվատորիայի գործունեության առաջին տասնամյակի փայլուն արդյունքներից էր» (1. էջ 34, 35, 36):

Օպերային դասարանի հիմնադրման մասին պատմական տեղեկություններ է նշում նաև Գ. Գ. Տիգրանովը, իր «Армянский музыкальный театр» («Հայկական երաժշտական թատրոն») քառահատոր աշխատության 1-ին հատորում՝ վկայակոչելով Ա. Սպենդարյանի «Заря Востока» (Թբիլիսի) թերթի 1927 թ. մարտի 31-ի համարում տպված «Հայաստանի պետկոնսերվատորիայի ուսանողների օպերային ներկայացումը» հատուկ հոդվածը: Նախ ընդգծվում են այն դժվարությունները, որ կային ներկայացման բեմականացման ճանապարհին, նաև շատերի թերահավատ վերաբերմունքը գալիք օպերային ներկայացման նկատմամբ և կասկածները դրա հաջողության վերաբերյալ: Ա. Սպենդարյանը գրում է (թարգմ. ռուս.-ից. - Ա. Ղ.). «Եվ ահա, վերջապես, մայիսի 18-ին կայացավ մեծ հետաքրքրությամբ սպասվող ներկայացումը, որ կրկնվում

է մայիսի 20-ին և 23-ին: <...> Արդեն առաջին իսկ տեսարանից («Դևը» օպերայի նախաբանը) թերահավատների կասկածներն սկսեցին ցրվել, իսկ ներկայացման վերջում, հանդիսատեսը, որով լեփ-լեցուն էր պետական դրամատիկական թատրոնի դահլիճը, հեռացավ բավականություն մեծ զգացումով: Ներկայացման այսպիսի որակը և արդյունքն ապացուցեց, որ սեփական գործի հրաշալի իմացությունը, եռանդն ու համառությունը կարող են հաղթահարել ցանկացած խոչընդոտ: Հատկապես, աչքի ընկավ կոնսերվատորիայի նվագախումբը՝ Ի. Ա. Օգանեզովի փորձառու ղեկավարությամբ, ինչն սպասելի էր, քանի որ նվագախումբն ունեցել է արդեն 2.5 տարվա արդյունավետ աշխատանք: Եվ ի հարկե բեմական լուրջ գործունեության ասպարեզ եկած նոր տարրը՝ վոկալիստները, որոնց մեջ գերակշռում էին կանացի ուժերը, ցույց տվեցին, որ գործի հանդեպ բուռն սիրո առումով չեն զիջում նվագախմբի արտիստ իրենց գործընկերներին: Մայիսի 18-ի ներկայացման մեջ կային և՛ լավ ձայներ, և՛ երաժշտական, և՛ բեմական առումներով հաջող դերակատարումներ: Մայիսի 18-ին հիմք դրվեց ապագա հայկական օպերային: Սա կարևոր իրադարձություն է մեր հանրապետության երաժշտական կյանքում: Եվ, հետևաբար, մեծ գնահատանքի է արժանի այն մարդկանց գործունեությունը, ովքեր դրեցին այդ հիմքերը. Օպերային դասարանի ղեկավար և օրկեստրի դիրիժոր՝ Ի. Ա. Օգանեզովը, ներկայացման ռեժիսոր՝ Ա. Ս. Բուրջալյանը, վոկալ դասարանի դասախոսներ՝ Մ. Մ. Մելիքսեթյանը և Ա. Ս. Աբրամյանը և ներկայացման մասնակից ուսանողները՝ լի երիտասարդական ավյունով ու եռանդով» (2. էջ 70-71):

Իրենց մասնագիտական գիտելիքների պաշարով և հմուտ մանկավարժությամբ օպերային դասարանի ուսումնաստեղծագործական գործունեությունը ամրապնդել և առաջ են տարել երաժշտարվեստի երևելի ներկայացուցիչներ՝ օրկեստրային և օպերային դասարանների ղեկավարներ Գ. Ե. Բուդաղյանը, Ս. Գ. Չարեքյանը: Մոսկվայից ԵՊԿ-ում դասավանդելու են հրավիրվում վոկալ արվեստի դասախոս Ն. Գ. Կարդյանը և դիրիժոր Կ. Ս. Սարաջյանը, վերջինիս փոխանցվում են դիրիժորական, օրկեստրային և օպերային դասարանների ղեկավարությունը: Մ. Բերկոն գրում է. «Վառ ու տոնական էր Կ. Ս. Սարաջյանի ղեկավարած օպերայի դասի բեմադրությունը, ներկայացվեցին հատվածներ «Պիկովայա Դամա», «Եվգենի Օնեգին», «Ջրահարս», «Ֆաուստ» օպերաներից: Որպես բեմադրող ռեժիսոր հրավիրվել էր Ի. Ի. Վոլչեկը, նկարիչն՝ էր Ա. Ն. Շաքարյանը: Ներկայացումը տեղի ունեցավ Սունդուկյանի անվան թատրոնում: Դա 1941 թվականի հունիսի 16-ն էր» (1. էջ 63, 64):

1940-ական թվականներին, Կ. Ս. Սարաջյանի ջանքերի շնորհիվ, օպերային դասարանն էլ ավել ամրապնդվեց և լուրջ առաջընթացներ արձանագրեց: Այս ժամանակահատվածում ուսանողների հետ բեմշարժման և դերասանի վարպետության դասընթացներն անկանոն էին ընթանում, առանձնահատուկ ուշադրություն է դարձվում երաժշտագեղարվեստական և վոկալ կատարողական հմտությունների զարգացմանը: Որոշ ժամանակ անց բեմադրություններ անելու, միաժամանակ դերասանական հմտությունների զարգացման և ուսուցման համար, հրավիրվեցին ռեժիսորներ. Գ. Մելքումյանը, Ա. Գուլակյանը, Դ. Պողոսյանը, հետագայում Պ. Աֆեյանը, Վ. Բագրատունին, Ռ. Ջրբաշյանը և ուրիշներ:

1950-ական թվականներին Ս. Չարեքյանը վերադառնում է օպերային դասարանի աշխատանքներին որպես երաժշտական մասի ղեկավար: Իսկ 1960– ական թվականներին օպերային պատրաստման կրթական գործում ներգրավվում են երիտասարդ դիրիժորներ Ա. Կ. Քաթանյանը, Ռ. Ա. Մանգասարյանը, Յ. Հ. Դավթյանը, Ս. Ղազարյանը: Այսպիսի ընթանուր տեղեկություններ է հաղորդում Մ. Բերկոն իր Երևանի Կոնսերվատորիայի 50-ամյակին նվիրված աշխատության մեջ (1. էջ 111):

Հետագայում, 1966 թ. առանձնանալով վոկալ ամբիոնից՝ օպերային դասարանը վերակազմավորվեց որպես ինքնատիպ, մասնագիտական կարևոր դասընթացներից բաղկացած կրթական ուրույն միավոր Օպերային պատրաստման ամբիոն (ՕՊԱ): Անցած տասնամյակների ընթացքում, շարունակ զարգացնելով իր ուսումնամեթոդական և ստեղծագործական գործառույթները վոկալ-ակադեմիական, դիրիժորական, կատարողական, պատմատեսական ամբիոնների հետ, համագործակցելով Հայաստանի Օպերային թատրոնի պրոֆեսիոնալ երգիչ-դերասանների, դիրիժորների և ռեժիսորների հետ՝ ձևավորեց յուրօրինակ ուսումնաստեղծագործական մթնոլորտ և ավանդույթներ: «Օպերային դասարանի աշխատանքներին, դասերին և ներկայացումների ցուցադրման համար խոչընդոտ էր հանդիսանում անհրաժեշտ բեմական տարածքների բացակայությունը: Այնուամենայնիվ, չնայած այս շատ շոշափելի թերությանը, տարիների ընթացքում օպերային պատրաստման ամբիոնը կարողացել է ցուցադրել թե ամբողջական ներկայացումներ, թե՛ դրանցից առանձին տեսարանների հետաքրքիր բեմադրություններ. Դ. Չիմարոզա՝ «Գաղտնի ամուսնություն», Ջ. Ռոսսինի «Սևիլյան սափրիչը», Ն. Ա. Ռիմսկի-Կորսակով՝«Մոցարտ և Սալիերի», Ի. Նիկոլան՝«Վինձորի զվարճասեր կանայք», Ս. Ռախմանինովի՝ «Ալեկո», Ն. Ա. Ռիմսկի-Կորսակով «Բոյարուհի Վերա Շելոգա» և այլն... այսպիսին է ոչ ամբողջական խաղացանկը». - գրում է Մ. Բերկոն (1. էջ 112): Շարունակելով՝ նա հույս է հայտնում, որ մոտ ժամանակահատվածում օպերային ստուդիայի առանձին շենք ունենալով, օպերային ամբիոնի առջև կբացվեն նոր հեռանկարներ, նա որակական նոր բարձունքների կբերի օպերային արվեստը հանրապետությունում, և միգուցե, կարող է դառնալ լուրջ նորարար ժամանակակից օպերային թատրոնի ճակատագրում:

Օրինաչափ է, որ հետագայում, 1981 թվականին, ՕՊԱ-ը, որպես կայացած կրթական համակարգ, ԵՊԿ-ին կից կյանքի կոչեց և ստեղծեց օպերային արվեստի կրթության և մասնագիտական զարգացման համար այնքան անհրաժեշտ և սպասված երաժշտական թատրոնի իր կառույցը՝ Օպերային ստուդիան (հարակից մասնաշենքով): Կրթամշակութային այս պատմական

ձեռքբերման մասին Գ. Գ. Տիգրանովը գրում է. «Իր երկարամյա բեղմնավոր գործունեության ընթացքում Երևանի կոնսերվատորիայի օպերային դասարանը երբեք չի ունեցել իր սեփական բեմական հարթակը, ինչը, բնականաբար, որոշ չափով սահմանափակել է նրա հնարավորությունները: Եվ ահա, 1981 թվականին Օպերային դասարանին (ճշտում՝ 1966-ից արդեն օպերային ամբիոն) հատկացվեց հատուկ թատերական տարածք՝ (Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի նոր մասնաշենքում) փոքրիկ, բայց հարմարավետ բեմով, 500 նստատեղ ունեցող դահլիճով և հարակից սենյակներով: Սա նոր, առավել բարենպաստ պայմաններ ստեղծեց օպերային ստուդիայի կրթական և ստեղծագործական աշխատանքների համար: Դրան մասնակից լինելուն ներգրավվեցին երաժշտական և թատերական արվեստի նշանավոր գործիչներ:

Արդեն առաջին իսկ ներկայացումը վկայում էր ստուդիայի աշխատանքի լուրջ ուղղվածության մասին: Դա Մոցարտի «Cosi fase tatti» («Այդպես են վարվում բոլորը») օպերայի բեմադրությունն էր, իրականացված երաժշտական ղեկավար և դիրիժոր Ռ. Ա. Մանգասարյանի և բեմադրող ռեժիսոր Վ. Բագրատունու ջանքերով, կոնսերվատորիայի ուսանողների մասնակցությամբ: «Ներկայացումը գրավեց իր երաժշտական և բեմական լուծումների բարձրաճաշակությամբ, երիտասարդ կատարողների ոգևորությամբ և մասնագիտական պատրաստվածության հասունությամբ, բեմադրական բաղադրիչների ներդաշնակությամբ»,- գրել է Մ. Տեր-Սիմոնյանը (3.): Հանրության և մամուլի կողմից բարձր գնահատականի են արժանացել նաև օպերային ստուդիայի հետագա մյուս ներկայացումները. Պ. Մասկանի՝ «Գեղջկական պատիվ» (դիրիժոր՝ Ռ. Ա. Մանգասարյան, ռեժիսոր՝ Վ. Բագրատունի), Ս. Ռախմանինով՝ «Ալեկո» (դիրիժոր՝ Յ. Հ. Դավթյան, ռեժիսոր՝ Ա. Մելիքսեթյան), Վ. Ա. Մոցարտ «Թատրոնի տնօրենը» և Ջ. Պերգոլեզի՝ «Սպասուհին-Տիրուհի» (դիրիժոր՝ Ռ. Ա. Մանգասարյան, ռեժիսոր՝ Հ. Ս. Հովհաննիսյան)» (4. էջ 10-11):

ԵՊԿ օպերային պատրաստման ամբիոնի պատմությանը վերաբերող հայտնի և հասանելի նյութերն անասելի սակավաթիվ են, որոնցից (առաջին անգամ ռուսերենից հայերեն թարգմանությամբ) նշեցինք ըստ Մ. Ա. Բերկոյի և Գ. Գ. Տիգրանովի ուսումնասիրությունները, որպես առանձին ընդհանրական անդրադարձներ: Ընդգծենք, որ երկու դեպքերում էլ մեծ մասամբ հանդիպում ենք կրկնվող, որոշ դեպքերում միմյանց շարունակող կամ լրացնող տեղեկությունների:

Հաջորդիվ, ՕՊԱ–ի մասին շատ սեղմ տեղեկություններ են հանդիպում 2008 թ., Երևանի կոնսերվատորիայի 85-ամյակի առթիվ հրատարակված «Ереванская государственная консерватория имени Комитаса в фотографиях, документах и высказываниях» («Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան լուսանկարներում, փաստաթղթերում և արտահայտություններում») գրքում, հեղինակ՝ Արմեն Գեորգիի Բուդաղյան: Այս հրատարակությունն առաջին փորձն է ներկայացնելու Երևանի կոնսերվատորիայի պատմությունը լուսանկարներով, փաստաթղթերով և ժամանակակիցների արտահայտած մտքերով: Ի թիվս կոնսերվատորիայի մյուս ամբիոնների և դասարանների, հիշատակվում է նաև Օպերային պատրաստման ամբիոնը՝ անցյալի և տվյալ ժամանակի պրոֆեսորադասախոսական կազմի խմբակային և անհատական լուսանկարներով և գործունեության մասին պատմող փոքր պարբերությամբ, որում ասվում է. «Երևանի կոնսերվատորիայի օպերային պատրաստման ամբիոնը ձևավորվել է 1968 թվականին՝ օպերային դասարանի հիմքի վար, որ գործել է մեներգեցողության բաժնի շրջանակներում 1926-1927 ուսումնական տարում: Տարբեր տարիներին ամբիոնը ղեկավարել են Վահագն Բագրատունին (1968-1970, 1987-1990), Ռաֆայել Մանգասարյանը (1970-1987 թթ.), Տիգրան Լևոնյանը (1991-2004 թթ.), Հովհաննես Հովհաննիսյանը (սկսած 2004-ից): Օպերային պատրաստման ամբիոնի աշխատանքները, անց են կացվում մեներգեցողության ամբիոնի, կոնսերվատորիայի օպերային ստուդիայի և Երևանի օպերային թատրոնի հետ ամուր համագործակցությամբ: Վոկալ, դիրիժոր, ռեժիսոր մանկավարժների և դաշնակահար-կոնցերտմայստերների միաձույլ աշխատանքի արդյունքում ուսանողները տիրապետում են օպերային արվեստի հմտություններին: Ամբիոնի սաները, բարձր որակավորում ունեցող կատարողները, հաջողությամբ ելույթ են ունենում տարբեր երկների օպերային բեմերում:

Օպերային դասարանի այնուհետև օպերային ամբիոնի կայացման գործում ակտիվ մասնակցություն են ունեցել հայտնի դիրիժորներ՝ Սուրեն Չարեքյանը, Գևորգ Բուդաղյանը, Կոնստանդին Սարաջյանը, Միքայել Մալունցիանը, Ռաֆայել Մանգասարյանը, Յուրի Դավթյանը, Արամ Քաթանյանը, ռեժիսորներ՝ Արշակ Բուրջալյանը, Լևոն Քալանթարը, Արմեն Գուլակյանը, Դավիթ Պողոսյանը, Ռաֆայել Ջրբաշյանը, Վահագն Բագրատունին, Տիգրան Լևոնյանը, Արմեն Մելիքսեթյանը, Հովհաննես Հովհաննիսյանը և ուրիշներ» (5. էջ 154): Առանձին սյունյակով, ըստ այբենական կարգի, նշվում են տարբեր տարիներին աշխատած և ներկայում աշխատող ռեժիսորների և դիրիժորների անվանացանկը (5. էջ 199-200): Հարկ է նշել, որ վերնշված հեղինակների (Մ. Ա. Բերկո և Գ. Գ. Տիգրանով) ուսումնասիրություններում բերվող տվյալների հետ համեմատած՝ առկա են տարեթվային անճշտություններ, օրինակ. Օպերային դասարանի առանձնանալը վոկալ դասարանից և վերակազմավորումը որպես առանձին Օպերային պատրաստման ամբիոնը Մ. Բերկոն թվագրում է 1966 թվականով, իսկ Ա. Գ. Բուդաղյանի մոտ թվագրվում է 1968 թվականին: Եթե այս անճշտությունն ընդհամենը երկու տարվա անհամապատասխանություն ունի, ապա հաջորդը կրկնակի կոպիտ սխալ է. Օպերային պատրաստման ամբիոնի տարբեր տարիներին դասավանդած դասախոս-մասնագետների ցանկում նշվում է, որ ռեժիսոր Արշակ Սերգեի (ի դեպ. հայրը՝ Սարգիս Բուրջալյան) Բուրջալյանն աշխատել է 1920-ական թվականներին, մինչդեռ պայմանական «1920-ականներ» ասված տասնամյակն իր մեջ ներառում է կարևոր հանգամանքների և իրադարձությունների կոնկրետ թվականներ, մասնավորապես. Ա. Բուրջալյանը Թբիլիսիից (առաջին անգամ) Հայաստան է

տեղափոխվել 1921 թվականին, 1921 թ. դեկտեմբերի 22-ին պաշտոնապես բացվում է Երևանի երաժշտական ստուդիան (1. էջ 15), իսկ ահա Երևանի կոնսերվատորիայի բացումը Մ. Բերկոն թվագրում է 1923 թ. «Երաժշտական ստուդիայի հաջողությունները, իհարկե, միակ նախապայմանները չէին այն հիրավի հրաշալի փաստի համար, որ արդեն 1923 թ. Երևանում բացվեց կոնսերվատորիա: <…> 1923 թ. ամռանը Ռոմանոս Մելիքյանին հանձնարարվեց կոնսերվատորիայի համար նախագիծ կազմել: Մտածված և հստակ ձևակերպված այս նշանավոր փաստաթուղթը, հաշվի առնելով այդ ժամանակաշրջանի իրական հնարավորությունները, թվագրված է 1923 թվականի հունիսի 15-ով» (1. էջ 20, 21): Վերջապես, կա հստակ թվագրվում. օպերային դասարանի առաջին ներկայացման տարեթիվը՝ 1927 թ., օրը՝ 18-ը մայիսի: Ցավոք ոչ մի տեղեկություն դեռ հայտնի չէ, թե ե՞րբ և ու՞մ կողմից է նախաձեռնվել օպերային դասարանի հիմնադրումը, ե՞րբ են հավաքագրվել դասախոսական և ուսանողական կազմերը, և մինչև մեզ հայտնի պրեմիերան, ի՞նչ կերպ, որտե՞ղ և որքա՞ն են ընթացել օպերային դասարանի դասերը: Ընդհանրական ասված «1920-ականներ»-ը չեն տալիս այս հարցերի պատասխանները, ավելին լղոզում են անորոշությամբ:

Այսպիսով, ներկայում մեզ հայտնի ընդհանուր բնույթի կամ մասնակի տեղեկությունները անբավարար են լիարժեք և համակողմանի ներկայացնելու ԵՊԿ-ի կրթական այնպիսի կարևոր բաղկացուցիչը, որն իր 95-ամյա տարեգրության ընթացքում հայ և համաշխարհային օպերային մշակույթին տվել է անկրկնելի, աշխարհահռչակ «ձայներ». ասել է թե օպերային երգիչ-դերասաններ, և այսօր էլ պատվով շարունակում է իր կրթական առաքելությունն ու ստեղծագործական հաղթարշավը հայրենական և համաշխարհային թատերաբեմերում: Ստուդիայում, տասնամյակների ընթացքում, դասավանդել, սերունդ են կրթել հայ մշակույթի երևելի գործիչներ և մանկավարժներ:

Հետևաբար, սույն աշխատությամբ, որպես ուսումնասիրության առաջին փուլ՝ նպատակ ունենք ուրվագծել Օպերային պատրաստման ամբիոնի կրթամշակութային պատմության տարեգրությունը, անցած ուղին, հայրենական մշակույթի անդաստանում ունեցած նշանակալի ձեռքբերումները, նաև թափանցիկ կերպով ուսումնասիրության տիրույթ բերել արդիական խնդիրները, հրատապ հարցերը և ապագայի տեսլականները՝ ի ճանաչում, արժևորում և պահպանում տարիների վաստակի, ձևավորված լավագույն ավանդույթների և ի խթանում ներկայի և ապագայի կրթամշակութային ծրագրերի զարգացման:

Հրատապ հարցը.

ԵՊԿ օպերային պատրաստման ամբիոնը, կարելի է աներկբա ասել, հայ երաժշտաթատերական մշակութային պատմության մեջ արդեն մեկդարյա պատմություն ունեցող, բացառիկ ձեռքբերումներով հարուստ, կրթամշակութային համակարգ է, որը թե՛ հայկական, թե՛ համաշխարհային օպերային մշակույթի արժեքները համապարփակ կրթությամբ, մասնագիտական արհեստավարժ մոտեցմամբ, փոխանցում է սերունդներին: Այսօր արդիական հայեցակարգով ուսումնասիրման դիտակետ բերելով ԵՊԿ օպերային պատրաստման ամբիոնը՝ մեզ համար հենք պիտի հանդիսանա նրա ինը տասնամյակների կրթաստեղծագործական պատմությունը և ավանդույթները: Իսկ ինչպիսի՞ աշխատություններ, նյութեր և աղբյուրներ են մեզ հայտնի ու հասանելի այս առումով:

ԵՊԿ օպերային պատրաստման ամբիոնի պատմության համակարգված տարեգրության և գործառույթների մասին վկայող աղբյուրների, առաջնային և օժանդակ նյութերի որոնումները, ցավոք, չտվեցին որևէ հենակետային արդյունք, նախկինում կատարված որևէ համապարփակ ուսումնասիրության կամ աշխատության վկայակոչում, որը կնպաստեր սույն ուսումնասիրության ուղղվածությունը հստակեցնելու և շարունակելու համար: Ավելին, բացահայտվեց հիմնադրման օրվանից մինչև մեր օրերը պատմաժամանակագրական ուսումնասիրության բացակայության փաստը (չհաշված տեղեկատվական այն սակավ ակնարկները, որ հանդիպում ենք Գ. Գ. Տիգրանովի և Մ. Ա. Բերկոյի վերնշյալ գրքերում): Առաջացած օբյեկտիվ հարցադրումները, իրենց հերթին վեր հանեցին բազում բացթողումներ, որոնք առ այսօր չեն բարձրաձայնվել և չեն ունեցել համապարփակ պատասխաններ որևէ վերլուծական կամ ուսումնասիրական աշխատությունում: Իսկ եթե երբևէ բարձրաձայնվել են, ապա զուտ կոլեգիալ բանավոր դիսկուրսներում, որպես հուշեր, կարծիքներ և տպավորություն՝ (ինչը տեղ ունի նաև ներկայում) այդպես էլ չառարկայանալով հուշագրության կամ հոդվածի տեսքով, տարաբնույթ օբեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով:

Այս հանգամանքի բացահայտման ֆոնին ուշադրություն է գրավում մեկ այլ առանցքային հանգամանք. առանց ներհամակարգային առաջնային խնդիրների վերհանման, գնահատման և ուսումնասիրման, տասնամյակների ընթացքում, դրսից ներբերած կրթական բարեփոխումների մոդելների արհեստական, մեխանիկական ներդրումը, իր առանձնահատկությունների ծավալով, գտնվելով առաջնային պլանում՝ պարզապես ստվերել է ներքին առկա խնդիրների ու հարցերի նստվածքը: Արդյունքում, տարիներ շարունակ կուտակված և լուծում չստացած շատ հարցերը տարաբնույթ բարեփոխումների ծածկույթի ներքո շարունակ ընդամենը կերպափոխվել են: Պատճառահետևանքային արատեսակ հանգամանքների մասին է վկայում բավական մտահոգիչ այն փաստը, որ երբևէ դրսից ներբերած որևէ կրթական բարեփոխումների փաթեթը իր մեջ չի ներառել օպերային արվեստի կրթամշակութային բարեփոխման տեսական և մեթոդական դրույթներ: Օպերային պատրաստման

ամբիոնը՝ որպես ուսումնակրթական յուրահատուկ երաժշտաթատերական բազմատարր համակարգ, դասավանդվող մասնագիտական հատուկ առարկաների մեթոդական, տեսական և գործնական բաղադրիչներով, անցյալ 95 տարիների ընթացքում որևէ տիպի գիտական հետազոտության օբյեկտ կամ առարկա չի եղել: Մինչդեռ ԵՊԿ-ի գործունեության կարևորագույն ոլորտներից մեկը՝ գիտական և ստեղծագործական հետազոտությունը, բուհի ամենաուժեղ կողմերից մեկն է, պրոֆեսորադասախոսական կազմը զբաղվում է հետազոտական աշխատանքներով, որոնց արդյունքները մեծապես ներդրվում են ուսումնական գործընթացում, նպաստում բուհի առաքելության և նպատակների իրագործմանը: Այս հանգամանքը հաստատագրվում է նաև միջազգային փորձագետների գնահատմամբ: Յուրաքանչյուր տեսություն պահանջում է վավերացում գործնական հարթությունում: Հետևապես ապագա գործնական ստեղծագործության առումով, տեսական բազա ստեղծելու համար առաջին հերթին անհրաժեշտ է իրականացնել պատմաժամանակագրական համակողմանի ուսումնասիրություն, պահպանել գործնական ժառանգության արժեքավոր վկայությունները, ճշտել տեսական ուղղվածության դրույթները, այնուհետև նախանշել հետագա զարգացման ուղիները:

Ինչպես արդեն վերը նշեցինք, գիտական որևէ ուսումնասիրությամբ համակարգված չէ Օպերային պատրաստման ամբիոնի գործունեության տարեգրությունը և պատմությունը, իսկ այդ բացը ներկայում թաղանթվում է սակավաթիվ ցրված տեղեկություններով, ընդհանուր նկարագրական բնույթի ակնարկներով, լավագույն դեպքում՝ ցրված, պատահական աղբյուրներում կամ պրոֆեսորադասախոսական ավագ սերնդի բանավոր հուշապատումներում (որոնք հրատապ գրառման կարիք ունեն): Այս առումով հուշագրությունը (հարցազրույցների միջոցով), դառնալու է որպես արժանահավատ հիմք և ձեռք է բերելու գիտական նշանակություն՝ հանդիսանալով անփոխարինելի սկզբնաղբյուր ուսումնասիրությունների համար:

Վերը նշված բացթողումների պատճառների քննարկումն այս պահին արդիական և նպատակահարմար չենք համարում, այն մեզ կբերի ենթադրական տեսակետների անարդյունավետ շահարկումների, ինչը դուրս է մեր այս ուսումնասիրության առաջնային հարցերի և վերջնանպատակային արդյունքի սահմաններից: Հետևաբար, ուսումնասիրության համար անհրաժեշտ է հստակ ձևակերպել ուսումնասիրվող թեմայի այս փուլում առաջնահերթ նպատակները

- Գործնականում մոդելավորել գիտական մտքի կրավորական կեցվածքը՝ ուսումնասիրության հարթակ բերելով ԵՊԿ օպերային պատրաստման ամբիոնը,

- Հետազոտության առարկա դիտարկել Օպերային պատրաստման ամբիոնի կրթական, գործնական, ստեղծագործական պատմական հարցերը,

- Հավաքագրել, գրառել և համակարգել Օպերային պատրաստման ամբիոնի պատմությանը վերաբերող խառը, սփռված փաստավավերագրական հայտնի և հասանելի բոլոր նյութերը և փաստաթղթերը,

- Իրականացնել Օպերային պատրաստման ամբիոնի գործնական և ստեղծագործական պատմության համակարգված ամբողջագրումը՝ հիմնադրման օրվանից մինչև մեր օրերը,

- Պատմաժամանակագրորեն վեր հանել Օպերային պատրաստման ամբիոնի կրթամշակութային տեսական և մեթոդական հարցերը և արդի խնդիրները՝ հետագա գիտահետազոտական ուսումնասիրության համար:

- Ընդգծենք, որ սույն ուսումնասիրությունը կատարվում է պատմամշակութային տեսության շրջանակներում:

- Թերևս բավական ուշացած, բայց այսօր մեր կողմից բարձրացված թեմայի ուսումնասիրությունը չափազանց կարևոր է ընդհանուր պատմամշակութային առումով, իսկ կրթական առաջընթացի առումով, թերևս, ճակատագրական: Շիրագործելը, հապաղելը կամ եղածով բավարարվելը հղի է հերթական բացթողումներով, ներկայիս հանգամանքների անտարբեր սառեցմամբ, անհրաժեշտ առաջընթացի տեսլականների վիժեցմամբ, պատմության և տարեգրության բավականին մեծ ժամանակահատվածի անդառնալի կորուստով, այդ պատմության իրենց ժամանակի լավագիտակ, մասնակից ներկայիս մասնագետ դասախոս-արվեստագետների ավագ սերնդի ունեցած բացառիկ տեղեկությունների և վկայությունների հետ միասին, ավելին. միջսերնդային ստեղծագործական ավանդույթների և կենսական կապերի խզմամբ, ներկայիս կրթամշակութային որևէ կարևոր ձեռքբերումների անտեսմամբ և ուծացմամբ, ինչն էլ կհանգեցնի ապագա սերնդի կրթական որակի անկման, բնագավառում ապագա ազգային գործիչների կորստի, ազգային կրթամշակութային արժեհամակարգի կարևոր տարրի փոշիացման:

Անցյալ տասնամյակների ընթացքում թույլ տված հետազոտական բացթողումները, դրանց արդյունքում կուտակված և մեզ հասած հետևանքային խընդիրը, որ պատճառ են արդի կրթաստեղծագործական տարաբնույթ հարցերի, պետք է շերտային և համակողմանի ուսումնասիրման թիրախ լինեին թե՛ երաժշտագետների, թե՛ թատերագետների և թե՛ արվեստաբանների համար:

XXI դարի 2-րդ քառորդի շեմին, օպերային արվեստի մասնագիտական կրթական բազմաշերտ համակարգում, այսօր ամբողջ աշխարհում, բարեփոխումների նոր մոդելների և որակի պահանջներ են առաջադրում,

քննարկվում և ուսումնասիրվում, կախված ժամանակակից օպերային թատրոնի պահանջներից, և մենք պարտավոր ենք պահպանել մեր երբևէ ունեցած դիրքերը, լինել համարժեք և համընթաց այդ ծրագրերին: Ընտրելով այս ճանապարհային քարտեզը՝ ի թիվս առաջնային սկզբունքների, պետք է զուգահեռ և հետևողականորեն ուսումնասիրենք, ճանաչենք, արժևորենք և հավուր պատշաճի ներկայացնենք հայկական օպերային արվեստի մասնագիտական կրթության լավագույն ժառանգությունը և փորձված ավանդույթները, մոդելավորենք կրթական համակարգի առաջընթացի մեր տեսլականներին և չափանիշներին համարժեք և համապատասխան արդիական ծրագրեր և մեթոդներ:

Այս համատեքստում, մեր գիտական ուսումնասիրության առաջին, հրատապ և արդիական թեմա է ընտրվում ԵՊԿ օպերային պատրաստման ամբիոնի պատմության և տարեգրության համակարգումը: Հետագայում այս աշխատանքի բազային հենքի վրա հնարավոր կլինի ծրագրել գիտական նոր հետազոտություններ, որոնցում արդեն ուսումնասիրության առարկա կարող են հանդիսանալ Օպերային պատրաստման ամբիոնում դասավանդվող ենթաառարկաների՝ դերասանի վարպետության, պարի և բեմական շարժման, օպերային դրամայի և դերերգի վերլուծության, դերերգի ուսուցման, օպերային արվեստանոցների և օպերային երգիչ-դերասանի գործնական պատրաստվածության մասնագիտացումների ստեղծագործական, պատմական և ժամանակագրական, մեթոդական, տեսական արդիական հարցեր և խնդիրներ: Ժամանակին համահունչ դրանց հետևողական ուսումնասիրությունները կձևավորեն յուրօրինակ գիտական հարթակ, որն իր վրա կվերցնի ապագայի անհրաժեշտ և հիմնավորված կրթական բարեփոխումների առաքելությունը:

Վերջաբան

Դիտարկելով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դերակատարությունը հայկական և համաշխարհային երաժշտական մշակույթի, պատմագիտական ուսումնասիրման, պահպանման, ստեղծագործական և կատարողական արվեստների դասավանդման և կատարելագործման կարևորագույն առաքելությունը, որպես Հայաստանի եզակի երաժշտական բարձրագույն կրթական հաստատություն՝ հեղինակը ուսումնասիրության առանձին տիրույթ է բերում և դիտարկում է ԵՊԿ-ի Օպերային պատրաստման ամբիոնի կրթամշակութային առանձնահատուկ հարցերը: Մտահոգիչ է համարում այն հանգամանքը, որ Օպերային պատրաստման ամբիոնը, որպես ուսմնակրթական և ստեղծագործական յուրահատուկ երաշժտաթատերական բազմատարր համակարգ, դասավանդվող մասնագիտական հատուկ ենթաառարկաների մեթոդական, տեսական և գործնական բաղադրիչներով, իր տարեգրության անցյալ 95 տարիների ընթացքում, երբևէ գիտական հետազոտության օբյեկտ կամ առարկա չի հանդիսացել: Հետազոտված և համակարգված չէ Օպերային պատրաստման ամբիոնի գործունեության տարեգրությունը և պատմությունը, որը ծանրակշիռ խընդիր է արդի կրթամշակութային առաջընթացի համար: Խնդիրն ուսումնասիրելով պատմամշակութային տեսության տիրույթում հեղինակը արդիական և հարատապ է համարում իրականացնել Օպերային պատրաստման ամբոնի գործնական և ստեղծագործական պատմության համակարգված ամբողջագրումը (հիմնադրման օրվանից մինչև մեր օրերը), գիտական հետազոտության հարթություն բերել Օպերային պատրաստման ամբիոնի կրթամշակութային գործնական, տեսական և մեթոդական հարցերը և արդի խնդիրները՝ հետագա գիտահետազոտական ուսումնասիրության համար: Ուսումնասիրությունը ծավալուն է, ուստի հեղինակը մտադիրէ այն ներկայացնել մի քանի մասից բաղկացած հոդվածներով: Սույն հոդվածը Մաս 1-ինն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Берко М. А.,* Консерватория Имени Комитаса, Ер.: Айастан, 1973 г.
2. *Тигранов Г. Г.,* Армянский музыкальный театр., Том. 1., Ер., 1956.
3. *Тер-Симонян М. П., Высокая и почетная миссия искусства. //Коммунист, Ер., 1984, 19 декабря.*
4. *Тигранов Г. Г.,* Армянский музыкальный театр., Том. 4, Ер., 1988., С. 10-11.
5. *Будагян А. Г.,* Ереванская государственная консерватория им. Комитаса — 85., Ер.: Издательство ЕГК. 2008 г.

Berko M. A., Komitas Conservatory, Yer., Hayastan, 1973. *Tigranov G. G.,* Armenian Musical Theatre. Vol. 1., Yer., 1956. *Ter-Simonyan M. P,* High and honorable mission of art., //Communist, December 19, 1984., Yer.
Tigranov G. G., Armenian Musical Theatre. Vol. 4., Yer., 1988., C. 10-11.
Budagyan A. G., Yerevanskaya gosudarstvennaya konservatoriya imeni Komitasa - 85., Yer.: Izdatel'stvo YSC, 2008.

REFERENCES

1. *Berko M. A.,* Conservatoriya imeni Komitasa., Yer.: Ayastan, 1973.
2. *Tigranov G. G.,* Armyanskij Muzykal'nyj teatr. Tom. 1., Yer., 1956.
3. *Ter-Simonyan M. P,* Vysokaya i pachitnaya misiya iskusstva. //Communist, December 19, 1984, Yer.
4. *Tigranov G. G.,* Armenian Musical Theatre. Vol. 4, Yerevan, 1988., S. 10-11,
5. *Budagyan A. G.,* Yerevan Komitas State Conservatory - 85. Yer.: Izdatel'stvo YGK, 2008.

Հեղինակի մասին. *ԱՐՍԵՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՂԱԶԱՐՅԱՆ (ծ. 3.8.1973 թ., ք. Երևան, ՀՀ): Ավարտել է 1996-ին՝ Երևանի Թատերական Արվեստի Պետական Ինստիտուտի թատերագիտական բաժինը (ակադեմիկոս Լևոն Հախվերդյանի կուրսում), 2014-ին՝ Մոսկվայի Թատերական Համալսարանի (ՀԱՉԼ-ԹԼՉԼԻ) ասպիրանտուրան, երաժշտական թատրոնի ռեժիսոր մասնագիտությամբ: Աշխատել է՝ 1998-2000 թթ. ք. Աշտարակի ժողովրդական թատրոնում՝ որպես ռեժիսոր, 1999- 2006 թթ. համատեղման կարգով՝ «Ռադիո Հայ–FM-104.1» ռադիոկայանում՝ որպես հաղորդավար, հեղինակային հաղորդաշարեր (գրական-երաժշտական), 2000-2001 թթ.՝ Գեղագիտական Դաստիարակության Ազգային կենտրոնի մանկական թատրոնում, որպես ռեժիսոր: Դասավանդել է՝2003-ից մինչ օրս աշխատում է Երևանի Կոմիտասի անվան Պետական Կոնսերվատորիայում, որպես վարպետության դերասանի դասախոս և օպերային պատրաստման ամբիոնում՝ ռեժիսոր–դասախոս, դոցենտ (2020 թ.), 2013-ից՝ Ղ. Սարյանի անվ. օպերային ստուդիայի ռեժիսոր: Հեղինակ է՝գիտական 4 հոդվածի: 2016–ից առ այսօր՝ աշխատում է Հայաստանի Հանրային Ռադիոյում որպես հաղորդավար. «ՀՀՌ–ի ձայն»: Հանրային ռադիոյի Ռադիոթատրոնի շրջանակներում 3 ներկայացում՝ հեղինակ և բեմադրող ռեժիսոր: 2018 թ. ԵՊԿ–ն ավարտած և առկա ուսանողներից կազմված հիմնադրել է «Արշակ Բուրջալյանի անվ. Երաժշտական Դրամայի Թատերախումբը», որի ներկայացումներով էլ հանդես է եկել միջազգային թատերական փառատոներում, ՀՀ և ԱՀ շրջաններում. Տարբեր տարիների, որպես ռեժիսոր բեմադրել է՝Բ. Նուշիչ «Երկու գող», Բ. Շոու «Պետական ամուսին», Պ. Պռոշյան «Սոս և Վարդիթեր», Գ. Սունդուկյան «Խաթաբալա», Ա. Ղազարյան «Հինգակի նոր հեքիաթը», Հ. Թումանյան «Անխելք Մարդը» ներկայացումները: ԵՊԿ-ի Ղ. Սարյանի անվ. օպերային ստուդիայում բեմադրել է Ջ. Բ. Պերգոլեզի «Սպասուհին Տիրուհի» բուֆֆ-օպերան, Դ. Չիմարոզա «Դիրիժորը» մոնո բուֆֆ-օպերա, «Ագնուս Դեի» հոգեբանական երաժշտական թատերախաղը, Ե. Չարենց «Տաղարան» գրական-երաժշտական թատերախաղը, Ջ. Ռոսսինի «Սեվիլյան Սափրիչ» կոմիկական օպերան (երկրերդ ռեժիսոր, և Ամբրոզիոյի դերակատար): Թատերական Լոռի միջազգային փառատոնի շրջանակներում, տարբեր տարիների, բեմադրել և ներկայացրել է Գ. Դոնիզետտի «Զանգակը» բուֆֆ-օպերա և Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերան: Արմմոնո միջազգային թատերական փառատոնի շրջանակներում որպես բեմադրող ռեժիսոր ներկայացրել է հեղինակային «Կարոտել եմ» հերոսական մոնոդրաման, առաջին անգամ Հայաստանում, որպես հեղինակային նախագծեր նախաձեռնել, բեմադրել և ներկայացրել է «Մնաս բարով պապաց», «Համբարձման գիշեր» մոնոօպերա ֆանտազիա ներկայացումները: Համերգային գործունեություն՝ 2000 թ. մինչև օրս, որպես հաղոր ավար, սցենարիստ, ռեժիսոր համագործակցել է հայ մեծանուն երգիչների, դերասանների, ստեղծագործական խմբերի և անսամբլների հետ, Երևան քաղաքում և տարբեր մարզերում: Իրականացրել է կառավարական բազմաթիվ համերգների և համապետական նշանակության միջոցառումների ՀՀ և ԱՀ: Ստեղծագործական գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում պոեզիան, որպես ասմունքող հանդես է եկել բազմաթիվ բեմահարթակներում ՀՀ, ԱՀ և սփյուռքում: Ձայնագրել է՝«Կորուսյալ հայրենիք», «Իմ Անի», «Գառնի Գեղարդ», «Ղարաբաղ», «Հայաստանը քեզ հետ» փաստավավերագրական և պատմական ֆիլմերը: Պարգևատրվել է՝2010-ին որպես ռեժիսոր արժանացել է «Կարոտ» հայկական միջազգային փառատոնի ոսկե դիպլոմի, 2014-ին Թատերական Լոռի XXII միջազգային փառատոնի Սոս Սարգսյան մշակութային հիմնադրամի, 2018 թ. Թատերական Լոռի XXIV միջազգային փառատոնի (Հ. Թումանյանի 150 ամյակին նվիրված) մրցանակների և դիպլոմների, 2017 և 2018 թթ. Արմմոնո միջազգային թատերական փառատոնի դիպլոմների և պարգևների: 2014, 2015, 2016, 2018 թթ. Գյումրիի «Վերածնունդ» միջազգային մրցույթ–փառատոնի հատուկ մրցանակներ և դիպլոմներ Երաժշտական թատրոն անվանակարգում: Փառատոներին մասնակից դերասանները և ուսանողները արժանացել են միջազգային դափնեկրի կոչումների: 2019 թ. Ա. Բուրջալյանի անվ. Թատերախումբը արժանացել է Հայաստանի Թատերական Գործիչների Միության (ՀԹԳՄ) Ոսկե Մեդալին: 2019 թ.՝ Հ. Թումանյանի մեդալի:

About the author: *ARSEN ARSHALUYS GHAZARYAN (b. 03.08.1973, Yerevan, RA). In 1996, he graduated from the Theater Department of Yerevan State Institute of Theatrical Arts studying under Academician Levon Hakhverdyan. In 2014, he completed a post-graduate course at Russian University of Theater Arts (RUTI-GITIS), specializing in musical theater directing. From 1998 to 2000 he worked as a director at Ashtarak Folk Theater, and from 1999 to 2006 he concurrently worked as a presenter of literary-musical author's program series at the radio station "Radio Hay-FM-104.1". Between 2000 and 2001, he worked as a director at the children's theater of the National Center of Aesthetic Education. He has been pursuing a teaching*

career since 2003, working at Yerevan Komitas State Conservatory as an acting skills lecturer and at the Department of Opera preparation as a director-lecturer, Associate Professor (since 2020), and director of the opera house studio named after Gh. Saryan since 2013. He has authored 4 scholarly articles. Since 2016, he has been working as a presenter at the Public Radio of Armenia "Voice of PRA". He is author and stage director of 3 plays within the framework of the Public Radio Theater. In collaboration with a group of YSC graduates of 2018 and current students, he founded the "Musical Drama Theater Group named after Arshak Burjalyan", whose performances were also featured in international theater festivals, in the regions of Armenia and the Republic of Artsakh. Over the years he has staged numerous plays, including "Two Thieves" by B. Nushich, "The State Husband" by B. Show, "Sos and Varditer" by P. Proshyan, "Khatabala " by G. Sundukyan, "The New Tale of the Old Yard" by A. Ghazaryan, "The Stupid Man" by H. Tumanyan. He staged the opera buffa "The Maid-Mistress" by J. B. Pergolesi in the opera studio named after G. Saryan, the mono opera buffa "The Conductor" by D. Cimarosa, the psychological musical theatrical play "Agnus Dei", the literary-musical play "Tagharan" by Ye. Charents, the comic opera "The Barber of Seville" by J. Rossini's (serving as a second director and playing the role of Ambrosio). Within the framework of the International Festival "Theater Lori", he has staged and presented the opera buffa "The Bell" by G. Donidzetti and the opera "Anush" by A. Tigranyan. Within the framework of the Armmono International Theater Festival, he presented the author?s heroic monodrama "I Missed You" as a stage director. For the first time in Armenia, he initiated, directed and presented the monoopera fantasy performances "Goodbye Pagliac" and "On the Night of Ascension" as an author's project. Since 2000, his concert activities have included roles as a singer, screenwriter, and director. He has collaborated with renowned Armenian singers, actors, creative groups, and ensembles in Yerevan and various regions. He has performed poetry as a reciter on many stages in Armenia, Artsakh, and the Diaspora. Additionally, he has recorded the documentary and historical films "Lost Motherland", "My Ani", "Garni Geghard", "Karabakh", "Armenia with You". As a director, he was awarded the Golden Diploma at the Armenian International Festival "Nostalgia", as well as awards and diplomas from the Sos Sargsyan Cultural Foundation at the XXII International Festival of "Theater Lori" in 2014 and the XXIVInternational Festival of Theater Lori in 2018 (dedicated to the 150th anniversary of H. Tumanyan). He also received special awards and diplomas at the 2017 and 2018 Armmono International Theater Festivals, and the 2014, 2015, 2016, and 2018 Gyumri International Competition-Festival "Renaissance" in the nomination musical theater. Actors and students participating in these festivals were awarded the titles of international laureates. In 2019, the Theater Group named after A. Burjalyan received the Golden Medal of the Theater Workers' Union of Armenia (TWUA) and the Tumanyan Medal.

Об авторе: *КАЗАРЯН АРСЕН АРШАЛУИСОВИЧ (род. 3.8.1973, г. Ереван). Окончил: в 1990 г. Ср. школу #80 им. В. Вагаршяна; в 1996 г. театроведческий ф-т Ергосинститута театра и кино (рук. академик Л. Ахвердян), дипломная работа "Драматургия Вильяма Сарояна на армянской сцене"; в 2014 г. аспирантуру ф-та муз. режиссуры Российского университета театрального искусства (рук., нар. артист РФ, проф. Д. А. Бертман), по теме: "Армянская оперная режиссура. Историко-творческие особенности". С 2018г. по сей день член Общественного совета по образованию, науке, культуре, спорту и делам молодежи. С 2018 г. основал творческую труппу "Театр музыкальной драмы им. А. Бурджаляна". С 2016г. по сей день - диктор Общественного радио РА "Главный голос ОРА". С 2003 г. по сей день преподаватель актерского мастерства, режиссер кафедры оперной подготовки ЕГК. Руководитель и режиссер многочисленных дипломных и аспирантских экзаменационных постановок, оперных отрывков: Дж. Верди "Риголетто ", "Аида "; Ш. Гуно "Фауст ", Дж. Пуччини "Богема ", "Виллисы "; В. А. Моцарт "Свадьба Фигаро ", "Дон Жуан"; Ж. Массне "Манон", Г. Доницетти "Лючия ди Ламмермур", Р. Леонкавалло "Паяцы", П. Масканьи "Сельская честь ", П. И. Чайковский "Пиковая дама ", Н. Римский-Корсаков "Царская невеста ", С. Рахманинов "Алеко" и др. С 2000 -2001 гг. режиссер Детского театра Национального центра эстетического воспитания. С 1999-2006 гг. ведущий ряда авторских литературно-музыкальных программ на Радиостанции "RadioHay' FM-104.1. С 1998-2000 гг. режиссер Аштаракского городского народного театра. Опера А. Тиграняна "Ануш", монооперы "Прощай, Паяц " и "Вознесенская ночь " в пост. К. участвовали в международных театральных фестивалях Лори и Арммоно (награждены дипломами и призами), опера Г. Доницетти "Колокольчик ", опера-буфф Д. Чимороза "Капельмейстер оркестра", опера-буфф Ж. Б. Перголези "Служанка-Госпожа". Автор пьесы и режиссер героикоисторической монодрамы "Позывной - Я скучаю", театральная пьеса "Агнус Дей"., литературно-музыкальная композиция Е. Чаренц "Тагаран", спектакли Б. Нушич "Два вора", Б. Шоу "Государственный муж", П. Прошян "Сос и Вардитер", Г. Сундукян "Хатабала", А. Казарян "Новая сказка старого двора". В качестве режиссера и сценариста организовал многочисленные правительственные мероприятия и концерты, как актер-чтец с концертами выступал в Армении и за рубежом, озвучил серию документальных и повествовательных фильмов: "Земля Обетованная", "Мой Ани", "Гарни - Гегард", "Карабах", "Армения с тобой". Награды: Золотой диплом Международ. фестиваля "Карот" (2010); Диплом культурного фонда Сос Саргсян XXII Международ. фестиваля "Театральный Лори" (2014); Приз и диплом 24-й Международ. фестиваля "Театральный Лори" (посвященный 150-летию О. Туманяна) (2018). Дипломы и награды Международ. театрального фестиваля "Арммоно" 2017-2018гг., Международ. конкурса "Ренессанс" - фестиваля в Гюмри в номинации "Музыкальный театр ". Актеры и студенты удостоены премии лауреатов фестиваля за 2014, 2015, 2016, 2018 годы. Актерам и студентам, участвовавшим в фестивалях, были присвоены звания лауреатов. Труппа театра им. А.Бурджаляна награждена Золотой медалью Союза театральных деятелей Армении (СТДА), медалью О.Туманяна (2019).*